

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՇՈՏԻ**

**ՄԱՐԴՈՒ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**Երևան – 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

**Գիտական ղեկավար՝**

Իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Գագիկ Գարուշի Հարությունյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Վահե Վարդանի Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**Ռաֆիկ Գագիկի Խանդանյան**

**Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 15:00-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող ԲՈՀ-ի Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդում (0028, Երևան - 28, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝**

**Ա.Հ. Խաչատրյան**

**Հետազոտվող թեմայի արդիականությունը:** ԼՂՀ Սահմանադրությամբ հռչակված մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչումը՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեք, ազատության, արդարության և խաղաղության հիմք, կրում է ոչ թե վերացական բնույթ, այլ ունի կոնկրետ բովանդակություն: Այն ենթադրում է, որ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանդիսանում է պետության սահմանադրաիրավական և միջազգային պարտականություն:

Մարդու իրավունքների գործնական պաշտպանությունը վկայակոչում է կայացած պետության մասին: Իրոք, միայն այն դեպքում, երբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս կառաջնորդվեն մարդու իրավունքներին և ազատություններին նախապատվություն տալով՝ կարող ենք փաստել ժողովրդավարական, իրավական պետության կայացված լինելու մասին: Նման պետությունում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ համակարգերից է մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման ինստիտուտը:

Գերագույն դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի լիազորությունները՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, պայմանավորված են ԼՂՀ իրավական համակարգում ամրագրված այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչումը որպես բնական, անքակտելի արժեքներ, նրանց նախապատվելի նշանակությունը ազգային և միջազգային իրավունքի համակարգում: Պետության պարտավորությունն է ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, պետության սահմանափակված լինելը այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Այսօր ԼՂՀ-ում անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտի չգործելը ուսումնասիրման հիմնախնդիր է դարձել, մանավանդ երբ ի տարբերություն մի շարք այլ երկրներում գործող այս իրավական ինստիտուտի՝ սահմանադրական վերահսկողության օբյեկտ է հանդիսանում ոչ միայն օրենքը, այլ նաև ցանկացած նորմատիվ ակտ, և նրա սահմանադրաիրավական ամրագրումից անցել է հինգ տարի (2009թ., հուլիս):

Հետազոտվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ԼՂՀ պետականության համար սահմանադրական արդարադատության և վերահսկողության ինստիտուտի ոչ բավարար ուսումնասիրված լինելով, Գերագույն դատարանի՝ որպես սահմանադրական դատավարություն իրականացնող մարմնի տեղը և դերը պետական իշխանության մարմինների համակարգում, նրա լիազորությունների, որոշումների իրավական բնույթի, ինչպես նաև այդ մարմնի կազմավորման և գործունեության օրենսդրական կարգավորման կատարելագործման անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով Արցախում ժողովրդավարական իրավական պետության կառուցման առանձնահատկությունները<sup>ա</sup> այսօր չափազանց արդիական է մնում սահմանադրական արդարադատության արդյունավետ համակարգի ձևավորումը<sup>բ</sup> հիմք ընդունելով համաշխարհային փորձը, ազգային, պատմական և հասարակական առանձնահատկությունները, սահմանադրական դատավարության ոլորտի տեսական և գործնական հարցերի, գիտական մտքի զարգացման վերլուծությունն ու համակարգված ամփոփումը:

ԼՂՀ անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնորոշ գծերի, ինչպես նաև սահմանադրական դատավարության խորը ուսումնասիրությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները, դատարանի իրավական դիրքորոշման դերը մարդու իրավունքների և ազատությունների ապահովման հարցերով մնում է Արցախի պետաիրավական համակարգի հետազոտության սկզբունքորեն կարևոր ուղղություն:

ԼՂՀ-ում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգի ու առանձնահատկության գիտական վերլուծության արդիականությունը պայմանավորված է նաև միջազգային հանրությանը ԼՂՀ կայացած պետականության ներկայացմամբ, ինչպես նաև ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացի խթանումով:

Արդիական է նաև անհատական գանգատի բացառիկ տեղն ու դերը նոր հազարամյակի սահմանադրական արդարադատության համակարգում, երբ մարդու իրավունքները և ազատությունները հռչակվում են որպես բարձրագույն արժեք, և նրանց պաշտպանությունը կրում է ինչպես ազգային, այնպես էլ վերպետական բնույթ, երբ իրավունքի գերակայությունն է դառնում ողջ իրավահարաբերությունների առանցքը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է ԼՂՀ-ում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգի ու առանձնահատկությունների համալիր համեմատական իրավական վերլուծությունը<sup>գ</sup> կապված սահմանադրական դատավարություն իրականացնող մարմնի գործունեության հետ, և հասարակական զարգացման ժամանակակից պայմաններում անհատական սահմանադրական գանգատի բովանդակության, ձևերի և իրական իրավական համակարգերով գիտական մոտեցումների կանոնակարգումը և խորացումը: Այդ նպատակները իրագործելու համար առենախոսը իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- ներկայացնել մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման, պաշտպանության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները<sup>դ</sup> այդ իրավունքները դիտարկելով որպես բարձրագույն արժեք ու անմիջական գործող իրավունք, և բացահայտել դրանց սահմանափակման արդի հիմնախնդիրները.

- ձևավորել օրենսդրության կատարելագործման մոտեցումներ<sup>ե</sup> ուղղված սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի վերահսկողական գործունեության բարեփոխմանը.

- ներկայացնել անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի զարգացման եվրոպական արդի միտումները.

- վերլուծել ԼՂՀ-ում անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները .

- բացահայտել անհատական սահմանադրական գանգատի քննության դատավարական առանձնահատկությունները.

- ուսումնասիրել անհատական գանգատով սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների իրավական էությունը ու այդ որոշումների կատարումն ապահովելու հիմնախնդիրները.

- վերլուծել ԼՂՀ Գերագույն դատարանի<sup>ա</sup> որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի և պետական իշխանության այլ մարմինների գործառնական փոխհարաբերությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում.

- որոշել սահմանադրական վերահսկողության կառուցակարգային զարգացումների հիմնական միտումները.

- ներկայացնել մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման և պաշտպանության սահմանադրական ու օրենսդրական հետագա ամրապնդման հրամայականները, նրանց պաշտպանության վերաբերյալ երաշխիքների դերը չճանաչված պետություններում:

**Ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտը մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման շրջանակներում ձևավորվող սահմանադրաիրավական հարաբերություններն են, ինչպես նաև անհատական դիմումներով Գերագույն դատարանում իրականացվող դատավարության առանձնահատկությունները:

Ուսումնասիրման առարկան են կազմում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման համակարգը և սահմանադրական դատավարությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը:

**Գիտական նորույթը:** Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ որոշ չափով համալրվում է Արցախի սահմանադրական իրավունքի գիտության բացը, և առաջին համալիր աշխատությունն է<sup>ա</sup> նվիրված Արցախում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգի ու առանձնահատկությունների ուսումնասիրությանը, որը կատարվել է Գերագույն դատարանի քննած գործերի պրակտիկայից և ընդունած որոշումների վերլուծությունից ելնելով: Ատենախոսությունը պարունակում է կոնկրետ տեսական ու գործնական առաջարկություններ և եզրահանգումներ<sup>ա</sup> ուղղված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում անհատական դիմումներով սահմանադրական վերահսկողության հետագա կատարելագործմանը, բացահայտում է չճանաչված պետություններում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական առանձնահատկությունները:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:** Ելնելով առաջադրված նպատակներից և դրանցից հետևող խնդիրներից<sup>ա</sup> պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. ԼՂՀ Սահմանադրությամբ հռչակված մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչումը<sup>ա</sup> որպես անօտարելի ու բարձրագույն արժեք, ազատության, արդարության և խաղաղության հիմք, կրում է ոչ թե վերացական բնույթ, այլ ունի կոնկրետ բովանդակություն: Այն ենթադրում է, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության սահմանադրաիրավական և միջազգային պարտականությունն է:

2. Անհատական դիմումի քննությունը սահմանադրական դատարանում չի փոխարինում ընդհանուր իրավասության դատարաններում մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավասությանը: Անհատական սահմանադրական դիմումի քննության արդյունքում որոշվում է նորմատիվ ակտի սահմանադրականությունը և ապահովվում է Սահմանադրության գերակայությունը:

3. ԼՂՀ Գերագույն դատարանը, իրականացնելով սահմանադրական արդարադատություն, ապահովում է Սահմանադրության գերակայությունը և մարդու իրավունքների ու ազատությունների<sup>9</sup> որպես դատական պաշտպանության իրավունքի զարգացման հնարավորություն: Այս դեպքում անձը իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը Գերագույն դատարանում իրականացնում է անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու միջոցով, սակայն չի հաղթահարվում Գերագույն դատարանի գործառնական երկվությունն այս հարցում<sup>10</sup> հանդես գալով որպես ընդհանուր իրավասության դատարան և որպես սահմանադրական արդարադատության ինստիտուտ:

4. Գերագույն դատարանը, իրականացնելով վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողություն, կատարում է դատական պաշտպանության հիմնական գործառնությունը. ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որը, սակայն, պահանջում է կառուցակարգային լուծումների առանձնահատուկ մոտեցում:

5. Անհատական սահմանադրական դիմումով Գերագույն դատարան դիմելու իրավունքը իրացնելու համար նույնպես անհրաժեշտ են այնպիսի նախապայմաններ, ինչպիսիք են դիմումի գրավոր ձևը, նորմատիվ ակտի այն դրույթը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, Սահմանադրության այն դրույթը, որին դիմողի գնահատմամբ հակասում է վիճարկվող նորմատիվ ակտի դրույթը և վերջինիս<sup>11</sup> Սահմանադրությանը հակասելու հիմնավորումները, դիմողի հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունների սպառման փաստի հիմնավորումը, պետական տուրքի վճարման անդորրագիրը և գործը քննության ընդունելը:

6. Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը հասարակական հարաբերությունները կարգավորելու նպատակով իրավունքի սուբյեկտների լիազորությունները օրենսդրությամբ չափավորելն է ու շրջանակի մեջ դնելը, որը ենթակա է կատարման:

7. Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի (այդ թվում<sup>12</sup> ԼՂՀ Գերագույն դատարանի) որոշումների պատճառաբանական և եզրափակիչ մասերը նպատակահարմար է, որ կազմեն մեկ միասնություն:

8. Անհատական սահմանադրական գանգատով դատարանի իրավական դիրքորոշումները կրում են ընդհանրացնող ամփոփիչ բնույթ, կազմում են ընդունած որոշման իրավաբանական էությունը, սահմանադրաիրավական իմաստով հանդիսանում են օրենսդրության մեկնաբանման և կատարելագործման արդյունք, կրում են հետևանքներ ունեցող ընդհանուր պարտադիր բնույթ (erga omnes) ու կոնկրետ գործերով (inter partes)<sup>13</sup> կողմերի համար, վերջնական են և պարտադիր բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

9. Համալիր համեմատական իրավական վերլուծությունը վկայում է, որ ներկայումս եվրոպական պետություններում անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտը ձեռք է բերում ունիվերսալացման միտում, որի պատճառն այն է, որ չնայած գործող համակարգերի բազմազանությանը՝ դրանց համար արժեքային կողմնորոշիչ են հանդիսանում մարդու իրավունքները՝ որպես բարձրագույն արժեք: Երկրորդ՝ իրավունքի գերակայության սկզբունքի իրացման կարևորագույն երաշխիքը երկրում սահմանադրականության ապահովումն է:

10. Ժամանակակից անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտը պետության սահմանադրական արժեքային համակարգի ապահովման և զարգացման կարևորագույն միջոց է, որը տարբերվում է իր բազմազանությամբ: Ընդհանուր բանավիճային է մնում այն հարցը, թե ֆիզիկական անձն ինչ հնարավորություն ունի իր սահմանադրական իրավունքները և ազատությունները պաշտպանելու դատարանում, ու այն նորմատիվ ակտերի շրջանակը, որի վրա պետք է տարածվի վերահսկողությունը: ԼՂՀ սահմանադրական գանգատի ինստիտուտն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չունի արմատական տարբերություններ այլ երկրների համեմատությամբ:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից օգտագործվել են գիտական ուսումնասիրման մի շարք մեթոդներ՝ իրավահամեմատական, տարրալուծման ու համադրման և այլն:

Հետազոտման մեթոդական հիմք է կազմում համակարգային մոտեցումը, որը առավել լայն հնարավորություններ է ընձեռում համակողմանի գնահատել անհատական սահմանադրական գանգատով դիմելը՝ որպես մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հիմնական միջոց, ստեղծել օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխներգործության հիմնավորված պատկերը, բացահայտել հեղինակին հետաքրքրող ոլորտի զարգացման որոշակի միտումները, վերհանել նրա գործնական իրականացման հիմնական հակասությունները և նրանց լուծման հնարավոր ճանապարհները:

**Աշխատության տեսական հիմքը:** Ատենախոսության համար հիմք են հանդիսացել սահմանադրական իրավունքի հիմնախնդիրների հետազոտմանը նվիրված գիտական ուսումնասիրությունները, հետազոտվող թեմայի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, որոնք գտնվում են հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում ու վերաբերում են սահմանադրականության հիմունքներին, սահմանադրական արդարադատության և իրավական պետության հարցերին, իշխանության տարանջատման սկզբունքին: Որոշիչ դեր են կատարել այն մենագրական հետազոտությունները, որոնք պարունակում են մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգի, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի և պետական իշխանության այլ մարմինների իրավական համակարգերի ու գործնական փոխհարաբերությունների գիտական վերլուծություն:

Ուսումնասիրման ընթացքում օգտագործվել են հայրենական և արտասահմանյան հեղինակների, մասնավորապես՝ Դ.Ազամբենի, Ն.Այվազյանի, Պ.Բարենբոյմի, Ն.Բոնդարի, Լ.Գարլիցկու, Գ.Դանիելյանի, Ա.Երիցյանի, Վ.Զորկինի, Բ.Էբգենի, Ե.Լուկաշևայի, Ի.Կանտի, Հ.Կելգենի, Ա.Կվիտկոյի, Ե.Կուրիսի, Գ.Հարությունյանի, Հ.Հաջինի, Վ.Հովհաննիսյանի, Հ.Հորացիոսի, Վ.Մակլակովի,

Կ.Յասպերսի, Վ.Ներսեսյանցի, Ա.Շառլի, Պ.Պացուլայի, Օ.Պփերսմանի, Գ.Ռասելի, Վ.Սադուրսկու, Վ.Ստեփանյանի, Ն.Վիտրուկի, Ե.Տանչևի, Ա.Ֆոսկուլեի և ուրիշներին աշխատությունները:

**Աշխատության նորմատիվ հիմքը:** Ատենախոսության նորմատիվ հիմք են կազմում ԼՂՀ հռչակման և անկախության մասին հռչակագրերը, ԼՂՀ Գերագույն Խորհրդի որոշումները, ԼՂՀ Սահմանադրությունը, ՀՀ և այլ պետությունների Սահմանադրությունները, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան և այլ նորմատիվ ակտեր:

**Ուսումնասիրության փորձառնական (եմպիրիկ) հիմքը:** Ուսումնասիրման եմպիրիկ հիմքն են կազմում<sup>ա</sup>

- ԼՂՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում աշխատանքի ընթացքում կատարված դիտարկումները և նյութերը:

**Ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունը անհատական սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգի համալիր ուսումնասիրությունն է, անհատական դիմումներով սահմանադրական դատավարության առանձնահատկությունների բացահայտումը:

Աշխատանքը ուղղված է անհատական դիմումներով Գերագույն դատարան դիմելու իրավունքի և Արցախում սահմանադրական դատավարության իրականացման այնպիսի արդիական հիմնախնդիրների լուծմանը, ինչպիսիք են դիմումների նախնական քննարկումը և վարույթ ընդունելը, դատավարական փուլերի իրավական կարգավորումը, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի որոշումների իրականացումը:

Ատենախոսության դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի վերաբերյալ ձևավորում են անհրաժեշտ տեսական հիմք<sup>ա</sup> ուղղված նրա իրավական կարգավորման կատարելագործմանը, գործնական միջոցների հիմնավորմանը: Այս ամենը կբարձրացնի այդ ոլորտի հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետությունը ու դրանով իսկ կնպաստի Արցախում իրավական պետության և միջազգային չափանիշներին համապատասխանող սահմանադրական արդարադատության կայացմանը:

Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական նպատակներով<sup>ա</sup> ԼՂՀ սահմանադրական իրավունք՝ առարկայի, հատուկ կուրսերի դասավանդման ընթացքում, ինչպես նաև փաստաբանական գործունեության ժամանակ:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը:** Աշխատանքը կատարվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնում, որտեղ անց է կացվել դրա քննարկումը և գրախոսությունը: Ատենախոսության հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում, միջազգային մի շարք միջոցառումներում ատենախոսի զեկույցներում և էլույթներում:

**Ատենախոսության կառուցակարգը:** Ատենախոսության կառուցակարգը կազմված է ըստ հետազոտվող նպատակների և խնդիրների: Ատենախոսությունը



կազմված է նախաբանից, երեք գլուխներից՝ բաժանված տասնմեկ ենթավերնագրերի, եզրակացությունից, սխեմաներից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

### **Ատենախոսության բովանդակությունը**

Թեկնածուական ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, որոշակիացվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ներկայացվում են օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը, գիտատեսական և փորձառնական հիմքերը, ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը ու նրա արդյունքների փորձարկումը:

**Ատենախոսության առաջին գլուխը**<sup>ա</sup> «Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության արդի չափորոշիչները ԼՂ-ում» բաղկացած է երեք ենթագլուխներից: **Առաջին գլխի առաջին ենթագլխում**<sup>ա</sup> «Մարդու իրավունքների ճանաչումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք, և դրանց ամրագրումը ԼՂ Սահմանադրությամբ» նշվում է, որ մարդու իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը պետության կարևորագույն սահմանադրական և միջազգային իրավական պարտականություններից մեկն է: Պետության խնդիրն է ստեղծել մարդու սահմանադրական իրավունքների քաղաքական և իրավական երաշխիքների պաշտպանության հուսալի համակարգ, որը իր մեջ կպարունակի սկզբունքների, օրենքների, կառուցվածքների և համակարգերի ամբողջ համալիր: Սյսինքն<sup>ա</sup> երկրում ձևավորվող սահմանադրական իրավական դաշտի հիմքը սահմանադրական հրամայական է:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչումը՝ որպես բնական հավակնություն, նշանակում է իրավունքների և ազատությունների իրականացում՝ անկախ իրենց իրավական թույլտվությունից: Պետությունն իրավական միջոցների օգնությամբ կարգավորում է այդ հավակնությունները՝ չսահմանելով դրանք: Իրավունքների և ազատությունների պահպանումը պետության կողմից նրանց հարգելն է ու նրանցով առաջնորդվելը: Ուստի, եթե մարդու ցանկացած իրավունք ապահովված չէ անհրաժեշտ պաշտպանության իրավական միջոցներով, ապա կրում է հոչակագրային բնույթ, որովհետև «մարդու իրավունքները բարձրագույն արժեք (հասարակական արժեք)» հասկացությունը կարժևորվի միայն այն իրականացնելու հնարավորության դեպքում:

Սահմանադրությամբ ճանաչելով մարդու իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք՝ Արցախի Սահմանադրությունը որոշում է նաև իր հիմնական արժեքը: Լեռնային Ղարաբաղի վերջին 23-ամյա պետականության զարգացման, ամրապնդման անցած ճանապարհը վկայում է, որ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ու սահմանադրորեն նրանց ամրագրումը՝ որպես բարձրագույն արժեք, պետության համար դարձել են գերակա խնդիր ինչպես այսօրվա, այնպես էլ ապագայի համար (զարգացման ուղենիշ), իսկ հասարակության բոլոր անդամների համար՝ իրավական կատեգորիա:

**Առաջին գլխի երկրորդ ենթագլխում**՝ «Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները ԼՂՀ-ում» նշվում է, որ ժողովրդավարության և իրավական պետության գլխավոր չափանիշներն են ոչ միայն Սահմանադրությունը և այնպիսի ժողովրդավարական ինստիտուտներ, ինչպիսիք են խորհրդարանը, քաղաքական կուսակցությունները, ազատ ընտրությունները, անկախ ԶԼՄ-ները, այլև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները:

Մարդու իրավունքների գործառնական ու կառուցակարգային պաշտպանությունը ցանկացած պետությունում հանդիսանում է քաղաքացիական հասարակության մակարդակի հիմնական չափանիշը: Քաղաքակիրթ հասարակությունը և իրավական պետությունը հանդիսանում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության ամենից վստահելի երաշխիքները: Նման պետություններում և նրանց հասարակության մեջ մարդու իրավունքները հռչակագրային բնույթ չեն կրում. այդ հասարակարգերին բնորոշ են մարդու իրավունքների իրականացման համակարգերի ստեղծման նկատմամբ հարգալից և գիտակցական վերաբերմունք: Ատենախոսի կարծիքով՝ ԼՂՀ քաղաքական համակարգի զարգացումը ենթադրում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության ժողովրդավարական ընթացակարգերի ստեղծումը և ամրապնդումը, որովհետև երիտասարդ չճանաչված պետության համար մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները ժողովրդավարացման և բարոյականության աստիճանի համամարդկային արժեքների հավատարմության գնահատման չափանիշներ են: Ատենախոսը նշում է, որ Լեռնային Ղարաբաղում պետական (վարչական) մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության ակտերը շատ դեպքերում հակասում են միմյանց, և այդ մարմինների հետ հարաբերություններում անձինք չունեն իրավունքների պաշտպանության պատշաճ երաշխիքներ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քաղաքացիների և պետական մարմինների միջև ծագող հարաբերությունները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է ունենալ մեկ միասնական իրավական ակտ:

**Առաջին գլխի երրորդ ենթագլխում**՝ «Մարդու իրավունքների սահմանափակման արդի հիմնախնդիրները և դրանց կարգավորումը ազգային օրենսդրությամբ ու իրավակիրառական պրակտիկայում» նշվում է, որ պետության խնդիրն է ապահովել մարդկանց իրավունքների և հասարակության շահերի միջև հավասարակշռություն, ինչը կպաշտպանի անհատին և նրա իրավունքները պետական մարմինների և այլոց ոտնձգություններից տարբեր իրավական ռեժիմների ժամանակ: Հարցի բարդությունը նրանում է, որ պետությունը մի կողմից պարտավոր է ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, մյուս կողմից՝ ստիպված է որպես անվտանգության կայուն զարգացման միակ երաշխիք, որոշակի իրավիճակներից ելնելով, սահմանել մարդու իրավունքները և ազատությունները սահմանափակող իրավական նորմեր, հետևել դրանց իրագործմանը, միևնույն ժամանակ ապահովել երկրի բնականոն զարգացումը և այլոց իրավունքներն ու ազատությունները: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման

վերաբերյալ դրույթները ամրագրված են տարբեր միջազգային իրավական ակտերում: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ԼՂՀ պատմության տարբեր ժամանակաշրջաններում կրել է խստագույն բնույթ: Ատենախոսը փորձում է ներկայացնել, թե ինչ քայլեր է իրականացրել նորանկախ պետությունը, որպեսզի պաշտպանի հասարակական և պետական կարգի հիմունքները, և ինչքանով են եղել այդ քայլերը համաչափ և համամասն: Ինչպես նաև ընդգծում է, որ ռազմական դրության պայմաններում իրավունքների և ազատությունների սահմանափակումները տարբերվում են պատերազմական ակտիվ գործողությունների ժամանակ իրականացվող սահմանափակումներից: Պատերազմը թելադրում է իր կանոնները, ուստի իրավունքի և ազատությունների սահմանափակման աստիճանը ավելի է խստանում, քան այլ իրավական ռեժիմների պայմաններում:

**Ատենախոսության երկրորդ գլուխը՝**«Անհատական սահմանադրական գանգատը՝ որպես մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հիմնական միջոց» բաղկացած է չորս ենթագլուխներից:

**Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝** «Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի զարգացման եվրոպական արդի միտումները» նշվում է, որ, չնայած գործող համակարգերի բազմազանությանը, դրանց բոլորի համար արժեքային կողմնորոշիչ են հանդիսանում մարդու իրավունքները, որոնք կոչված են համախմբելու հասարակության տարբեր սոցիալական խավերն ու խմբերը, հաղթահարելու ճգնաժամային իրադրությունները և անձը դնելու հասարակական զարգացման բոլոր գործընթացների կենտրոնում, որը հիմնված է ազատության, իրավունքի գերակայության վրա: Ատենախոսը ընդգծում է, որ սահմանադրական վերահսկողության եվրոպական մոդելն իր զարգացման մեջ անցել է մի քանի փուլ: Առաջին փուլն ընդգրկում է նախապատերազմյան շրջանը, երբ որոշ երկրների սահմանադրություններում արտացոլվում է սահմանադրական վերահսկողության ինստիտուտը, և համարյա ամենուրեք ամրագրվում է սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի առանձնահատուկ նշանակությունը: Սահմանադրական վերահսկողության ինստիտուտի զարգացման երկրորդ փուլն ընդգրկում է հետպատերազմյան շրջանը, որը բնութագրվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և ընդհանուր իրավասության դատարաններից առանձին գործող ինստիտուցիոնալ համակարգերի զարգացմամբ: Սահմանադրական վերահսկողության կատարելագործման երրորդ փուլը կապված է կոմունիստական գաղափարախոսությունից եվրոպական երկրների հրաժարման և սահմանադրական արդարադատության մարմինների կազմավորման հետ, որոնք կազմակերպման մասով ընդունեցին սահմանադրական վերահսկողության մայրցամաքային-եվրոպական մոդելը: Ատենախոսը անդրադառնում է այն հարցին, թե եվրոպական երկրներում ինչպես է ներկայացվում գանգատը սահմանադրական վերահսկողության մարմիններ: Այսպիսով՝ ժամանակակից աշխարհում սահմանադրական դատարանները, հանդիսանալով պետության և հասարակության կայուն զարգացման կարևոր գործոն, միևնույն ժամանակ ընդունակ են արդյունավետ գործելու քաղաքական և տնտեսական կայունության պայմաններում: Քաղաքական տատանումները չամրապնդված ժողովրդավարություններում քաղաքական ներգործություն են ունենում Սահմանադրական դատարանի վրա:

Սահմանադրական դատարանների մատչելիությունը դրանց ազդեցությունն ու արդյունավետությունը որոշող կարևոր գործոններից մեկն է: Այդ մատչելիության առանձնահատկությունը նրանում է, որ սահմանադրական դատարաններն ըստ անհատական գանգատների քննում և կոնկրետ հիմնախնդիրների վերաբերյալ որոշումներ ու եզրակացություններ են ներկայացնում հասարակայնությանը՝ ըստ մարդու իրավունքների խախտման փաստերի:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝** «Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները ԼՂ-ում» նշվում է, որ սահմանադրական հանրաքվեից հետո (10.12.2006թ.) անհրաժեշտություն է առաջացել ԼՂ-ում գործող դատական համակարգի կառուցվածքը համապատասխանեցնել Հիմնական օրենքին: Առաջնորդվելով ԼՂ Սահմանադրության 109-րդ հոդվածի դրույթներով՝ 2008 թվականի հուլիսի 1-ից ԼՂ-ում սկսել է գործել եռաստիճան դատական համակարգ, որը բաղկացած է ԼՂ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ԼՂ վերաքննիչ և ԼՂ Գերագույն դատարաններից: Սահմանադրության 113-րդ հոդվածն ամրագրել է, որ ԼՂ-ում բարձրագույն դատական մարմինը Գերագույն դատարանն է, որը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից: Նրա գործունեության նպատակն է ապահովել Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը: Ատենախոսությունում ուշադրությունը հրավիրվում է անհատական դիմումներով սահմանադրական պալատում որոշումների ընդունման կարգին, որը ունի որոշակի առանձնահատկություններ: Այսինքն՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ անհատական դիմումի քննությունը մերժելու հարցով միաձայնության բացակայության դեպքում Գերագույն դատարանի նախագահը հրավիրում է աշխատակարգային նիստ՝ անհատական դիմումով գործը քննության ընդունելու կամ մերժելու հարցը Գերագույն դատարանի ամբողջ կազմով լուծելու համար: Առաջին հայացքից թվում է, թե անհատական դիմումի քննության ընդունելու կամ մերժելու սահմանված կարգը նպաստավոր է դիմողի համար: Մակայն իրականում կարող է ստեղծվել անհատական դիմումների քննության ընդունման անհաղթահարելի պատնեշ: Խոսքը վերաբերում է անհատական դիմումի քննության ընդունելու հարցը Գերագույն դատարանի լիակազմ նիստ տեղափոխելուն, որտեղ անհատական դիմումի քննության ընդունելու հարցի լուծմանը պետք է մասնակցեն նաև վճռաբեկ պալատում գործը ըստ էության քննած կամ ըստ էության չլուծող դատական ակտ կայացրած դատավորները:

**Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝** «Անհատական սահմանադրական գանգատի քննության դատավարական առանձնահատկությունները» ընդգծվում է, որ անհատական դիմումով սահմանադրական դատավարությունը ԼՂ-ում կարգավորվում է Սահմանադրական դատավարության մասին ԼՂ օրենքով և արդարադատության ընդհանուր դրույթների հետ մեկտեղ ունի իր առանձնահատկությունները: Սահմանադրական դատավարությունը, ատենախոսի կարծիքով, իր էությամբ արդարադատական բնույթ է կրում: Ի տարբերություն ընդհանուր իրավասության դատարաններում իրականացվող դատավարությունների, որոնք ծավալուն են և մանրամասն կարգավորվում են օրենքներով (օրենսգրքերով), կողմնակցված են, սահմանադրական դատավարությունը կարգավորվում է համառոտ և ընդհանուր դրույթներ

պարունակող օրգանական օրենքներով: Այսինքն՝ անհատական սահմանադրական դիմումի քննության դատավարության վերաբերյալ տարբեր հարցեր օրենսդրությամբ մակերեսորեն են կանոնակարգվում: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր դատավարություններին վերաբերող հիմքերը, հիմնական և ընդհանուր հարցերը արտացոլված են Սահմանադրություններում: Մինևույն ժամանակ սահմանադրական արդարադատությունն առանձնահատուկ է այն իրականացնող մարմնի լիազորությունների Սահմանադրությամբ նախատեսված լինելու փաստով և սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացումը կանոնակարգելու իրավասությամբ:

Անհատական սահմանադրական դիմումով սահմանադրական դատարանը նորմատիվ ակտի (կամ նրա մի մասի) օրինականությունը չի որոշում, որովհետև դիմումի քննության արդյունքում և հակասահմանադրական ճանաչվելու դեպքում դեռ անհատի խախտված իրավունքները և ազատությունները լրիվությամբ չեն վերականգնվում: Հետագա քայլերը պետք է կատարվեն օրենսդրի, նորմատիվ ակտը ընդունողի կամ կոնկրետ գործը քննող դատարանի կողմից սահմանադրական դատարանի ընդունած որոշման լույսի ներքո: Ընդհանուր բանավիճային է մնում այն հարցը, թե ֆիզիկական անձն ինչ հնարավորություն ունի իր սահմանադրական իրավունքները և ազատությունները պաշտպանելու դատարանում, ու այն նորմատիվ ակտերի շրջանակը, որի վրա պետք է տարածվի վերահսկողությունը:

**Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝** «Անհատական զանգատով սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների կատարումն ապահովելու հիմնախնդիրները» նշվում է, որ եթե Սահմանադրական դատարանի որոշումները չեն կատարվում կամ կատարվում են ոչ պատշաճ ձևով, ապա ուղղակի խաթարվում են այն նպատակները, որին ծառայում է սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը: Այսինքն՝ սահմանադրական արդարադատության իմաստը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է: Ատենախոսի կարծիքով՝ այս հարցում որոշիչ դեր ունի երկրի Նախագահը՝ որպես Սահմանադրությունը պահպանող և երաշխավորող: Ատենախոսի եզրահանգմամբ Սահմանադրական դատարանները արդարադատություն իրականացնելու համար օրենսդրությամբ օժտված են լայն լիազորություններով սեփական որոշումների բովանդակությունը ձևակերպելու համար: Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը պետք է իր որոշումներին հաղորդի կատարման տարբեր ու եզրափակիչ մասերի ձևակերպումները (անկախ նրանից, թե վիճարկվող ակտը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող) պետք է լինեն հստակ ու հասկանալի, քանի որ Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ օրենսդրությամբ որոշումների տեքստերում բովանդակային բնույթի փոփոխություններ, պարզաբանումներ իրականացնելու հնարավորություն չի նախատեսվում: Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի իրացման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ սահմանադրական դատարանի կողմից իրավական նորմի՝ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում այն իրավունքի ուժով դառնում է անվավեր և չի կարող այլևս կիրառվել:

**Ատենախոսության երրորդ գլուխը՝** «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանադրական գանգատի ինստիտուտի հետագա կատարելագործման ուղիները» բաղկացած է չորս ենթագլուխներից:

**Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝** «ԼՂՀ Գերագույն դատարանի և պետական իշխանության այլ մարմինների գործառնական փոխհարաբերությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում» նշվում է, որ ինչպիսին էլ լինի սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի փոխհարաբերությունը իշխանության մյուս թևերի հետ, այնուամենայնիվ, պատմականորեն նրա առաքելությունը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է, սահմանադրական արդարադատության իրականացումը մարդու իրավունքների պաշտպանության միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրականության կայացման ճանապարհին պետական շինարարության արդիական հիմնախնդիրներից կարևորագույնը իշխանությունների փոխհարաբերությունների խնդիրն է: Գերագույն դատարանը ակտիվ համագործակցում է Հանրապետության Նախագահի և իշխանության մյուս թևերի հետ: Ատենախոսը կարևորում է, որ Գերագույն դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի, լիազորությունների իրավական կարգավորման հիմքերը ամրագրված են Սահմանադրության 114-րդ հոդվածի 1-ին կետում, ինչը դատարանի գործառնական անկախության ապահովման երաշխիք է: Ինչ վերաբերում է Գերագույն դատարանի և Խորհրդարանի փոխհարաբերությունների իրավական կողմին, ապա այն հիմնված է կողմերի անկախության և ինքնուրույնության սկզբունքի վրա: Այդ փոխհարաբերություններն իրականացվում են օրենսդիր մարմնի ընդունած օրենքների և որոշումների վերաբերյալ սահմանադրական վերահսկողությամբ: Այդ փոխգործողություններում հատուկ տեղ են զբաղեցնում դատարանի ընդունած որոշումներին հետևող քայլերը: Ատենախոսը կարևոր է համարում պատգամավորների՝ որպես դիմող սուբյեկտների համար սահմանված քվոտան, որովհետև նրանց քանակը և իրավական կարգավիճակը մատնանշում են սահմանադրական դատավարության մատչելիությունը: Պետական իշխանության թևերի սահմանադրորեն ամրագրված լիազորությունների հավասարակշռվածությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որ այդ թևերից յուրաքանչյուրը չփորձի հասնել նախանշված նպատակներին միայն բացարձակ ինքնուրույնությամբ, սեփական ինքնավարության շնորհիվ՝ անկախ իշխանության մյուս թևերից, այդ դեպքում կխախտվի ոչ այնքան կոնկրետ իշխանության թևի գործունեության կարգը, ինչքան պետական իշխանության միասնությունը և ամբողջականությունը:

**Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝** «Դատական սահմանադրական վերահսկողության կառուցակարգային զարգացումների հիմնական միտումները» նշվում է, որ աշխարհի տարբեր պետությունների օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ տեղի է ունենում սահմանադրական վերահսկողության իրականացման երկու հիմնական ձևերի (ամբերիկյան և եվրոպական) մոդելների սերտացում: Մեր երկրի իրավական համակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ ԼՂՀ-ն ընտրել է մի ճանապարհ, որտեղ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի ինստիտուցիոնալ

առանձնահատկությունը կայանում է նրանում, որ սահմանադրական արդարադատությունը առանձնացված չէ ընդհանուր իրավասության դատական համակարգից, ու այն իրականացվում է Գերագույն դատարանի կողմից: Անհնար է չնկատել այն ընդհանուր պրոբլեմները, որոնք առաջանում են զարգացած և երիտասարդ ժողովրդավար երկրների սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների առջև: Նման պայմաններում անհրաժեշտ է փոխադարձ փորձի փոխանակում անցումային շրջանի պետությունների սահմանադրական դատարանների և ժողովրդավարական ավանդույթներով ու կայուն քաղաքական համակարգերով երկրների միջև, այլ ոչ թե փորձի մեխանիկական ըմբռնում: Դատական սահմանադրական վերահսկողության զարգացումների միտում կարելի է համարել նաև նրան համակարգավածություն տալը: Այսինքն՝ չնայած առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն իրականացնում են մասնագիտացված դատարանները (մարմինները), այնուամենայնիվ, ժամանակակից պայմաններում ինքնուրույն ապահովելու և համատարած իրականացնելու այդ գործառնությունը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները ի գործու չեն: Այսօր աշխարհի տարբեր երկրամասերի ինտեգրման գործընթացներին ակտիվ մասնակցում են սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները, և շնորհիվ այդ մարմինների համագործակցության՝ լուծվում է ընդհանուր սահմանադրական մշակույթի, սահմանադրական աշխարհայացքի ձևավորման խնդիրը: Այդ մարմինների համար շատ կարևոր է ձևավորել սահմանադրական արդարադատության ունիվերսալ համակարգ և ստեղծել սահմանադրական դատավարության իրականացման յուրատեսակ միջոցների միասնություն:

**Երրորդ գլխի երրորդ ենթագլխում**՝ «Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական ու օրենսդրական հետագա ամրապնդման հրամայականները» շեշտվում է, որ աշխարհի տարբեր պետությունների սահմանադրությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր պետություն իր Սահմանադրությունում ամրագրում է որոշ սկզբունքներ, նորմեր և արժեքներ՝ ստեղծելով նրա դրույթները բնորոշելու հիմք: Սահմանադրական արժեքների ամբողջությունը որոշում է ցանկացած երկրի ազգային-ռազմավարական շահերը: Դրանց շնորհիվ ստեղծվում է արժեքային համակարգ, ու Սահմանադրությունը դառնում է փաստացի իրականություն, բայց միայն այն դեպքում, երբ երկրի ամբողջ իրավական համակարգը խարսխվում է այդ արժեքների վրա, ու վերջիններս գոյություն ունեն մարդու համար սահմանադրորեն երաշխավորված ձևով: Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների կատարելագործումը ենթադրում է իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը և ամրապնդումը: Միջազգային փորձը վկայում է, որ երկրի հիմնական օրենքում մարդու իրավունքների և ազատությունների տարբերակված ամրագրումը նպաստում է վերջիններիս պաշտպանության համար համաչափ երաշխիքներ ունենալուն: Բայց միայն Սահմանադրությունում նշված ձևով իրավունքների և ազատությունների կառուցվածք ունենալը բավարար չէ: Տարբեր պետությունների սահմանադրությունների ուսումնասիրությունից առենախոսը եզրահանգում է, որ

նրանց սահմանադրաիրավական հայեցակարգի համաձայն՝ մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման, պաշտպանության, ինչպես նաև դրանց սահմանափակումներին ու անմիջական գործողությանը վերաբերող հարցերի նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում:

Հատուկ նշանակություն ունի նաև այն հարցը, թե ինչպես է ըմբռնվում և սահմանադրորեն ամրագրվում իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքը, որը հայեցակարգային առումով ենթադրում է, որ իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը (նա իշխանության աղբյուրն է ու նրան է պատկանում այդ իշխանությունը) և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար Սահմանադրությամբ պետք է ամրագրվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ: Ատենախոսը եզրահանգում է, որ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը և արմատավորումը երկրի սահմանադրաիրավական համակարգում՝ որպես իրավական պետության անկյունաքար, կարող է կատարվել միայն որոշակի հանգամանքների առկայության դեպքում:

**Շրթոդ գլխի չորրորդ ենթագլխում՝** «Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ երաշխիքների դերը չճանաչված պետություններում» նշվում է, որ մարդու անվտանգությունը ապահովում է պետությունը, որն ավելի վառ արտահայտվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ջանքեր գործադրելիս: Մարդու խախտված իրավունքների իրավապաշտպանական ներուժը չի սպառվում ներպետական միջոցներով: Այսօր ԼՂՀ քաղաքացիները երկրի չճանաչված լինելու պատճառով հնարավորություն չունեն իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու Եվրոպական վերաբնակման մարմիններին, թեկուզ Սահմանադրությունը և իրավական բազան նման հնարավորություն քաղաքացիներին ընձեռում են: Մարդը՝ որպես հասարակական հարաբերությունների գիտակից սուբյեկտ, իրավունակ է: Նա իրավունքներ ունի, որովհետև նա մարդ է և ոչ թե այս կամ այն երկրի քաղաքացի: Մարդու իրավասուբյեկտությունը կախված չէ նրա քաղաքացիության և պետության կարգավիճակից: Իրավունքը և ոչ թե պետությունը՝ որպես քաղաքական ինստիտուտ, պետք է կարգավորի մարդկանց միջև հարաբերությունները: Այժմ միջազգային կազմակերպությունների և աշխարհի հանրության առջև ծառայած խնդիրների բնույթն այնպիսին է, որ տարածաշրջանների անվտանգությունը, կայուն զարգացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը հնարավոր է ապահովել, եթե միջազգային կոնվենցիաներին, դաշնագրերին, պայմանագրերին միանան (վավերացնեն, իրավագործությունը ճանաչեն) շատ պետություններ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության չճանաչված լինելը չի ազատում ԼՂ իշխանություններին միջազգային պարտավորություններից, մանավանդ որ մենք առաջնորդվում ենք միջազգային իրավունքի նորմերով ու ամբողջ օրենսդրությունը խարսխված է այդ նորմերի վրա: Այս կապակցությամբ ատենախոսը առաջարկում է նախ՝ միջազգային կառույցների անդամ չլինելով հանդերձ՝ վավերացնել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Կոնվենցիան, ճանաչել ու երաշխավորել ինչպես նրա ու կից



արձանագրությունները, այնպես էլ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավագործությունը: Երկրորդ՝ չնայած ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը միջազգային կազմակերպություններին դիմելու իրավունքը չի պայմանավորում իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցների սպառամբ, բայց Կոնվենցիայի՝ ներպետական իրավական պաշտպանության բոլոր միջոցների սպառման պայմանը, ստենախոսի կարծիքով, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմի զարգացման կարևորագույն լծակն է:

### **Ստենախոսության եզրակացություններ**

Ժողովրդավարական իրավական պետության կարևորագույն հատկանիշը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչումն է՝ որպես բարձրագույն արժեք և անմիջական գործող իրավունք, որը խարսխված է իրավունքի գերակայության վրա:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդհանուր երաշխիքը հանդիսանում է սահմանադրական կարգը: Սահմանադրությունը, մարդուն և նրա իրավունքներն ու ազատությունները հռչակելով որպես բարձրագույն արժեք, պետական իշխանության մարմինների վրա է դրել անձի անբաժանելի իրավունքները հարգելու, երաշխավորելու, պաշտպանելու պարտականությունը՝ սահմանադրական այդ հիմունքների իրագործման ընթացակարգերի ապահովման միջոցով:

Իրավական պետության ձևավորումն ու կայացումը հանդիսանում են սահմանադրական երաշխիքներից ամենակարևորները: Իրավունքի գերակայության ապահովումն իրավական պետության գրավականն է:

Սահմանադրական բոլոր երաշխիքները գործում են միասնության մեջ՝ ձևավորելով ամբողջական համակարգ, որը նպաստում է մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը, ապահովմանը, պաշտպանությանը:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման արդի հիմնախնդիրները պահանջում են խորը համակարգային հետազոտություն տեսական, իրավական և գործնական տեսանկյունից (Սահմանադրություն-օրենսդրություն-իրավակիրառական պրակտիկա):

Իրավունքների և ազատությունների սահմանափակումը հասարակական հարաբերությունները կարգավորելու նպատակով իրավունքի սուբյեկտներին լիազորությունները օրենսդրությամբ չափավորել, շրջանակի մեջ դնելն է, որը ենթակա է կատարման: Սահմանափակումները թելադրվում են առաջին հերթին այլոց իրավունքները և ազատությունները հարգելու նպատակով, ինչպես նաև պետության և հասարակության բնական գործունեության անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման անհրաժեշտությունը առաջանում է ոչ միայն ավտորիտար, այլև ժողովրդավարական պետությունում: Մի դեպքում այդ սահմանափակումները պահանջվում են հատուկ իրավական ռեժիմի պայմաններում, մյուս դեպքում՝ իրավունքի հատուկ սուբյեկտի կարգավիճակից էլնելով, որը պայմանավորված է նրանց հասարակության և պետության հետ հարաբերություններով: Պետության խնդիրն է վարել այնպիսի քաղաքականություն, որը ոչ թե կնպաստի արտակարգ իրավիճակների ստեղծմանը, այլ, ընդհակառակը, կարտահայտի նման

պայմանների կանխարգելումը, որոնք առաջացնում են ապաքաղաքականացվածություն, բռնություն և նման այլ դրսևորումներ:

Անհատական սահմանադրական գանգառի ինստիտուտը հանդիսանում է իրավական նորմերի ամբողջություն, որոնց օգնությամբ մարդուն և մյուս լիազոր սուբյեկտներին իրավունք է վերապահվում հիմնական իրավունքների և ազատությունների խախտման առնչությամբ դիմելու Սահմանադրական դատարան:

Եվրոպական երկրների սահմանադրական արդարադատության մարմիններում անհատական դիմումների ինստիտուտը վերջնականապես չի ձևավորվել. այն շարունակում է զարգանալ ու կատարելագործվել որպես սոցիալական մի արժեք, որի օգնությամբ անհատը հասարակայնությանն է ներկայացնում դատարանի՝ սահմանադրորեն պաշտպանվող արժեքների և հետապնդվող նպատակների հաշվառումով ձևավորված դիրքորոշումը կոնկրետ հիմնախնդիրների վերաբերյալ՝ ըստ մարդու իրավունքների խախտման փաստերի, ինչը որոշակիորեն ներգործում է հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Անհատական գանգառի արդյունավետությունը եվրոպական երկրներում սերտորեն կապված է ընդհանուր իրավասության դատարանների գործունեության, նրանց հեղինակության հետ: Դատարանը պետք է հասարակական բարձր հեղինակություն վայելի:

Անցումային ժողովրդավարության երկրներում քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակը, դատական որոշումների նկատմամբ հարգանքի բացակայության պայմաններում սահմանադրորեն փոխառված անհատական սահմանադրական բողոքի ինստիտուտը դժվարությամբ է արմատավորվում, ինչի առնչությամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի համար դժվար է մարդու իրավունքների պաշտպանություն ապահովելը:

ԼՂՀ սահմանադրական արդարադատության համակարգը դեռևս զարգացման երկար ճանապարհի պետք է անցնի:

ԼՂՀ Գերագույն դատարանը, հանդիսանալով քաղաքացիական, քրեական և վարչական գործերով բարձրագույն դատարան, մինևույն ժամանակ հանդես է գալիս որպես սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին: Դատարանի նման կազմակերպչիրավական ձևը չի նպաստում մասնագիտական դատավարության կայացմանը: Անհրաժեշտ է իրականացնել սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության կատարելագործումը, որն ուղղված կլինի սահմանադրական պալատ եզրույթին նոր ինստիտուցիոնալ ձևակերպում տալուն: Այսինքն՝ անցումային ժամանակաշրջանում և վերափոխվող հասարակարգի համար նպատակահարմար է, որ ԼՂՀ-ում գործի ընդհանուր իրավասության դատարաններից կազմակերպչիրավական կառուցվածքի առումով առանձին սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին (պալատ), որն իր հերթին կնպաստի տվյալ մարմնի ցանկացած ձևումներից գերծ մնալուն և հեղինակության բարձրացմանը՝ որպես Սահմանադրության գերակայությունը ապահովող մարմնի: Այդ մարմինը ի սկզբանե լեգիտիմության որևէ կասկած չպիտի առաջացնի: Մինչև անհատական դիմումի ինստիտուտի կայացումը (2-3 տարի) անհրաժեշտ է, որ պետությունը երաշխավորի անվճար իրավաբանական օգնություն սահմանադրական դատավարության օրենքով

սահմանված կարգով և նախատեսված դեպքերում (ինչո՞ւ է, հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով): Այս խնդրի լուծումը կնպաստի նաև փաստաբանության կայացմանը՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ:

Տարբեր երկրների սահմանադրական արդարադատության փորձի համեմատական վերլուծության ընդհանուր հետևությունն այն է, որ խիստ բազմազան է անհատական դիմումների քննության դատավարական տարբեր ձևերի կիրառման պրակտիկան: Ընդհանուր բանավիճային է մնում այն հարցը, թե ֆիզիկական անձն ինչ հնարավորություն ունի իր սահմանադրական իրավունքները և ազատությունները պաշտպանելու դատարանում ու այն նորմատիվ ակտերի շրջանակը, որի վրա պետք է տարածվի վերահսկողությունը:

Սահմանադրական դատարանները արդարադատություն իրականացնելու համար օրենսդրությամբ օժտված են լայն լիազորություններով սեփական որոշումների բովանդակությունը ձևակերպելու համար: Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը պետք է իր որոշումներին հաղորդի կատարման տարբեր ու եզրափակիչ մասերի ձևակերպումները (անկախ նրանից, թե վիճարկվող ակտը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող) պետք է լինեն հստակ ու հասկանալի, քանի որ Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ օրենսդրությամբ որոշումների տեքստերում բովանդակային բնույթի փոփոխություններ, պարզաբանումներ իրականացնելու հնարավորություն չի նախատեսվում: Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի իրացման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ սահմանադրական դատարանի կողմից իրավական նորմի՞ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում այն իրավունքի ուժով դառնում է անվավեր և չի կարող այլևս կիրառվել:

Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը առաջին հերթին կախված է նրանից, թե տվյալ երկրում իրավական ու սահմանադրական մշակույթը որ մակարդակի վրա է, և ինչ վստահություն են վայելում դատարանները հասարակության կողմից:

Ներկայումս չենք հասել ԼՂ իշխանության բոլոր թևերի լիազորությունների հավասարակշռության, ինչը չի թույլատրում ապահովել դատական իշխանության իրական անկախությունը և համապատասխանաբար՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Սահմանադրության գործողության ութ տարվա և Գերագույն դատարանի սահմանադրական պալատի հնգամյա պրակտիկան վկայում է, որ պետության սահմանադրական կարգի ձևավորման նվաճումը պայմանավորված է ոչ միայն Սահմանադրությամբ ամրագրված տեքստով, այլև այդ դրույթների իրականացմամբ:

Իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի իրագործումը ենթադրում է Գերագույն դատարանի՝ որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի գործունեության ակտիվացումը: Խոսքը վերաբերում է նրան, որ Գերագույն դատարան դիմելը ոչ միայն այդ իրավասությունն ունեցող սուբյեկտների հայեցողական իրավունքն է, այլև գործառնական պարտականությունը: Օրենսդրության անկատարությունը

նպաստում է Գերագույն դատարանի սահմանադրական պալատի որոշումներին իրագործման ձգձգմանը:

Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հետագա ամրապնդման հրամայականները սահմանադրական կառուցակարգերի որոշակիացումն ու կատարելագործումն են: Սահմանադրության ոչ մի իդեալական կառուցվածք ինքնըստինքյան չի կարող երաշխավորել, որ կապահովի մարդու հիմնական իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությունը: Սահմանադրության ներուժը թաքնված է ոչ թե նրա տեքստի բառերում, այլ յուրաքանչյուրի կողմից նրա դրույթները ճիշտ ընկալելու, դրանցով առաջնորդվելու և գործելու մեջ: Անչափ կարևոր է, որ յուրաքանչյուր պետություն իրավունքի գերակայությունը պահպանելու և ամրապնդելու համար գտնի իր սեփական ուղին և չբավարարվի դրանով, որովհետև իրավունքի գերակայությունը մշտապես զարգացող, կենդանի սկզբունք է:

Մարդու իրավունքների իրական ճանաչումը, ապահովումը և պաշտպանությունը հակամարտող պետությունների համար կոնֆլիկտի կարգավորման հիմք է:

Մարդու իրավունքների պաշտպանության վերպետական մարմինների անհասանելիությունը մարդու իրավունքների խախտում է, որը ուղղակի սպառնալիք է տարածաշրջանի անվտանգությանը:

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության չճանաչված լինելը չի ազատում ԼՂ իշխանություններին միջազգային պարտավորություններից, մանավանդ որ մենք առաջնորդվում ենք միջազգային իրավունքի նորմերով, ու ամբողջ օրենսդրությունը խարսխված է այդ նորմերի վրա: Այս կապակցությամբ առաջարկվում է նախ<sup>ա</sup> միջազգային կառույցների անդամ չլինելով հանդերձ<sup>ա</sup> վավերացնել, ճանաչել ու երաշխավորել այն միջազգային իրավական ակտերի իրավագործությունը, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և ազատություններին:

Տեղը, որ զբաղեցնում են մարդու իրավունքներն ու ազատությունները մեր հասարակության մշակույթում ընդհանրապես և սահմանադրական մշակույթում մասնավորապես, մեծապես պայմանավորված է քաղաքական ռեժիմի բնույթով, սոցիալ-տնտեսական զարգացման, մարդկանց կրթության և դաստիարակության մակարդակով, պատմական ավանդույթներով, ինչպես նաև ժողովրդի հոգեկերտվածքի առանձնահատկություններով:

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչումը, նրա քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը կախված են սահմանադրական պահանջները հետևողականորեն և անշեղորեն կատարելու քաղաքական կամքից: Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգերը անհնար է փոխառնել նրանք պետք է գիտակցաբար պահանջված լինեն, դառնան մեր առօրյան, ինչպես նաև, ԼՂՀ-ն, իր չճանաչված կարգավիճակով հանդերձ, իրականացնելով տարածաշրջանում կարևորագույն ռազմաքաղաքական դեր, պետք է ձգտի ինքնահաստատվել<sup>ա</sup> որպես մարդու իրավունքների նկատմամբ հարգանք դրսևորող պետություն:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1. «Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները ԼՂՀ-ում» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի տեղեկագիր, N 3(60),2011թ., էջ 4-13:

2. «ԼՂՀ Գերագույն դատարանի և պետական իշխանության այլ մարմինների գործառնական փոխհարաբերությունները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի տեղեկագիր, N 4(61),2011թ., էջ 4-19:

3. «Մարդու իրավունքների սահմանափակման արդի հիմնախնդիրները» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի տեղեկագիր, N 3(65),2012 թ., էջ 5-22:

4. ,,Նիծաիւնիւնս ածիւնեմեա օաւաւիօեմ օաւաւիօեմ էւնօեօօօն էւնեաեաօաեւիւն էւնօեօօօեւիւն թաւիւն"//,/,, Էւնօեօօօեւիւնս իծաւնիւնեա", Իթաօիւնիւնս աւնօիւն Էւնօեօօօեւիւնս իծաւնիւն էւնօեօօօեւիւնս էւնօեւիւնս յօծաւ իւնիւնս էւնօեօօօեւիւնս, 2012. Դնի. 4(58), ճ.92-113.

5. «Անհատական սահմանադրական գանգատի քննության դատավարական առանձնահատկությունները» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի տեղեկագիր, N 2(68), 2013թ., էջ 4-21:

6. «Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքները Լեռնային Ղարաբաղում» զեկույց «Մարդու իրավունքների պաշտպանությունը սահմանադրական արդարադատության պրակտիկայում» խորհրդաժողովում, 2008թ., դեկտեմբերի 9-10, նվիրված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 60-ամյակին և ԼՂՀ Սահմանադրության օրվան: Եր.: Լժար, 2009թ., էջ 36-46:

**ДАНИЕЛЯН АРАРАТ АШОТОВИЧ**

**Իծյալի է ինիաւիւնոնը ինօւանօթիւնը յծաա +աւիաթն իս  
ելիոնեօօթիւնի նօւիւծիւլիւնօւի ա իաւիւծիւ-Էսծաաաօնիւ  
Ծաւիօթիւն**

**Ճ Ա Շ Բ Ի Ա**

Աի Աաաաիւն իւնիւնիւնարօնը սուսիծ է ածօթիւնօւն օսիւ,  
ծաթիւնաաօնը նօւիւնիւ սա իօօ+իւն ծաճաւիւնիւնոն, իծաաաւրօնը  
իւսաթ, իծաւիւն, օթն է ինիւնիւն շաա+է երեաւիւնիւն, սա  
օւիւնօթ+աթիւն է իւնիւնիւն+աթիւն սաճ, իւն+աթիւնաաօնը իօօ+իւն  
իւնիւն, օւիւնեօթօրօնը ինիւնիւն իւնիւնիւն, սունիւնիւն իս շաթօօ,  
օսաթիւնօթօրօնը օօ օւիւնօթ+աթիւն է իսաթիւն+աթիւն շիս+ելիւն.

Իսծաւր շաաա երեաւիւնիւն , Նիսծաւիւնիւն օթօթիւն  
աաթիւնօթիւնիւն, իսաթիւն+իւն է շաթօօ իսա +աւիաթն ա ԻԷԲ",  
նիւնիւն օթ օթօ իւնաա. Ա իս+աթ իսծաւր շաաւ  
ծաթիւնօթօրօնը օւիւնօթ+աթիւն սունիւնիւն իսծաւր իսա +աւիաթն  
թիւն սունիւն օսիւնն է իսիւնիւնօթիւնիւն սաթիւնօթիւնիւն իսա  
է օթիւնիւնիւնիւն ա Էլիոնեօօթիւն ԻԷԲ, շաթիւն ծաթիւնարօնը  
օսիւնիւնիւնիւն է նօթօթօթիւնիւն սաթիւնիւն իսաթիւն+իւն է շաթօօ իսա  
+աւիաթն ա ԻԷԲ, է իս իսաթիւն+աթիւն իսծաւր իսծաւր  
իսաթիւնիւն իսծաւր+իւն իսա +աւիաթն է օթ օթիւնօթիւնիւն  
իսթիւնիւնիւնիւն շաթիւնիւնիւնիւնիւն է իսաիւնիւնիւնիւնիւն իսաթիւնիւն.

Աի սուսիւն շաաա երեաւիւնիւն , Էլիսաթիւնիւն  
ելիոնեօօթիւնիւնիւն շաթիւն օթ ինիւնիւն նօւնօթիւն ինօւնօթիւն  
իսաա +աւիաթն իս ելիոնեօօթիւնիւն նօւիւծիւլիւնօւի", նիւնիւնիւն  
օթ +սուսիւն իւնաա, սսուսիւն երեաւիւնիւն նիսծաւիւնիւնիւն  
օսիւնիւնիւն ծաթիւնիւն ելիոնեօօթիւնիւն ելիոնեօօթիւնիւն  
աթիւն, սսուսիւն իսծաւր է ինիւնիւնիւն ելիոնեօօթիւնիւն  
ելիոնեօօթիւնիւնիւն շաթիւն ԻԷԲ, իս ինիւն նօւնիւնիւնիւն  
իսաթիւնիւնիւն ինիւնիւնիւնիւն ծաթիւնիւնիւն  
ելիոնեօօթիւնիւն ելիոնեօօթիւնիւնիւն շաթիւն, ա օթիւն  
իսաթիւն իսաթիւն+իւն երեաւիւնիւն օթիւնիւն իսաիւն  
ելիոնեօօթիւնիւնիւն ելիոնիւն.

Ա օթիւնիւն շաաա , Նիսծաւիւնիւնիւնիւն ելիոնեօօթիւն  
ելիոնեօօթիւնիւնիւն շաթիւն ա ԻԷԲ", նիւնիւնիւն օթ  
+սուսիւն իւնաա, ծաթիւնօթօրօնը օսիւնիւնիւնիւնիւնիւն  
իսաթիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւն  
իսաթիւնիւնիւն ԻԷԲ է սսուսիւն իսաիւն սիւնօթիւնիւնիւն  
աթիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւնիւն  
իսաթիւնիւնիւն իսա +աւիաթն, սսուսիւնիւնիւն օսիւնիւն  
նօթօթօթիւնիւնիւն ծաթիւնիւնիւն ելիոնեօօթիւնիւնիւն  
ելիոնիւն,

иіоаааеуьпоңы іооё ааеуіаеэоаіі оёоіаіеаіеу еііңоёооёііііуо ё çаеііііааоаеуііуо ааоаіоёе іааңіа+аіеу ё çауеòу іоаа +аеііааеа, ң оаеуь еіоіоіаі іоааеааааоңы аіаңоё ңііоааоңоаоьуеа еçіаіаіеу а Еііңоёооёь, а оаеа еңнеааоаоңы іаоаіеçі іаааіңоааоңоааііуо ааоаіоёе çауеòу іоаа +аеііааеа а іаіоёçіаіііуо аіңоааоңоаао.

Њіааоæауеаңы а оааіоа ауаіау, іоааеіæаіеу ё çаеь+аіеу іаіоааеаіу іа іоёçіаіеа іоаа +аеііааеа еае ауңоае оаіііңоё ё іаііңоааңоааііі ааеңоаоьуааі іоааа, іңііауааьуааіңы іа ааооіааіңоаа іоааа еае ааæіаеэае +аооу іоааіаіаі аіңоааоңоаа; ңоаііаеаіеа ё оаçаеòеа еіңоёоооа еіаеаеаоаеуііе еііңоёооёііііе æаеіау еае ааæіаеэааі іаоаіеçіа іооаіу іоаа аоаæааі, іаііе еç іоааіеçаоёіііі-іоааіауо ааоаіоёе ео çауеòу; иіоаааеаіеа іңііаіуо оаіааіоёе оаçаеòеу ңоаааііаі еііңоёооёііііаі еііооіеу ё ао..

Ааоіоіі іоааеааааоңы:

- іаоаңііооаоу çаеііііааоаеуңоаі, оааоёеòоьуаа еііңоёооёііііа ңоаііоіеçаіаңоаі ё іаоаçіааіеа іоааіа еііңоёооёііііаі ңоаііоіеçаіаңоаа аіа ңеңоаіу ңоаіа іауае оеаеаеёе;

- ңіааооаіңоаіааоу çаеііііааоаеуңоаі, оааоёеòоьуаа аііоіңу, ңауçаііуа ң ауііеіаіеаі оаоаіе Ааооіаіаі ңоаа ІЕД іоііңеòаеуі еііңоёооёііііңоё ііоі çаеііа;

- ң оаеуь ааеуіаеэааі оёоіаіеаіеу ааоаіоёоіааіііе çауеòу іоаа +аеііааеа іоё іңоуаңоаеаіеё еііңоёооёііііе оаоіоіу оңіааооаіңоаіааоу ңооёеòоо Еііңоёооёе ІЕД, ңааеаа аа аіеаа ііоаааеаіііе;

- іаіоёçіаіііңоу ІЕД ңі ңоіоііу іаæаоіаоіаііаі ңііауаңоаа іа ңіеіаао іоааоңоааіііңоу аеаңоае çа іаæаоіаоіаіуа іауçаіііңоё, а ңауçе ң +аі іаіаоіаеіі іоёңооіеòу ё іоіоаңо оаоёеаоёе іаæаоіаоіаіуо еііааіоёе ё ңіааооаіңоаіааоу іаоёіаеуііа çаеііііааоаеуңоаі ё ао..

Іааіңооіііңоу іаæаоіаоіаіуо іоааііа çауеòу іоаа +аеііааеа аеу аоаæааі іаіоёçіаііуо аіңоааоңоа уаеуаоңы іоуііе оаоіçіе оааеіаеуііе ааçіааңііңоё ё іаоооаіеаі іоаа +аеііааеа.

Іаæаоіаоіаіа іоёçіаіеа іаçааеңеііңоё ІЕД, іааңіа+аіеа ё çауеòа іоаа аа аоаæааі çааеңуо іо іаоае ііеёе+аңеіе аіеё ііңеааіааоаеуіі ё іаоёіңіеòаеуіі ауііеуьуо еііңоёооёііііа ооааіааіеу.

Іаоаіеçіу çауеòу іңііаіуо іоаа +аеііааеа іааіçііæіі çаеіңоаіааоу, ііе аіеаіу ауоу ңіçіаоаеуіі аіңооааіааіу іауаңоаіі. Іңоуаңоаеуу ааæіаеэоь аіаііі-ііеёе+аңеоь оіеу а оааеіа, ІЕД аіеаіа ңооаіеòуңы ё ңаііооааоæааіеь еае аіңоааоңоаі, іоіуаеуьуаа оааæаіеа ё іоаааі +аеііааеа.

Њеңоаіа еііңоёооёііііаі ңоаііоіеçаіаңоаа ІЕД іоааңоіеò іоііеòе аеёоаеуііе іооу оаçаеòеу.





**Procedures and peculiarities of the realization of human rights  
to constitutional justice in the Nagorno Karabakh Republic**

**ABSTRACT**

The introduction substantiates the choice and relevance of the topic, reveals the level of its scientific readiness, defines the object, subject, purposes and main tasks of the study, its theoretical and methodological basis, stresses the scientific novelty, formulates the basic provisions for defense, characterizes their theoretical and practical significance.

The first chapter of the research, entitled "Modern criteria of guaranteeing, ensuring and protecting human rights in the NKR", consists of three subchapters. The beginning of the first chapter discusses the theoretical issues of the recognition of human rights as the supreme value and directly acting rights and their consolidation in the NKR Constitution, then the functional and structural guarantees of ensuring and protecting human rights in the NKR are revealed, and the urgent problems of human rights restrictions and its settlement by the National Legislation and law-enforcement practice are determined on the basis of practical examples.

In the second chapter of the thesis, entitled "Individual constitutional complaint as primary means of the realization of human rights to constitutional justice", which consists of four sub-chapters, the author examines the modern European development trends of the institute of individual constitutional complaint, reveals the features and peculiarities of the institute of individual constitutional complaint in the NKR, on the basis of comparative analysis represents the procedural features of examining individual constitutional complaints, as well as the problems of ensuring the realization of the decisions of the constitutional control organs.

The third chapter, entitled "The Improvement of the Institute of Individual Constitutional Complaint in the NKR", which consists of four sub-chapters, touches upon the functional relationship of the NKR Supreme Court and other state bodies in

the sphere of human rights protection, identifies the major trends of structural development of the judicial constitutional control, identifies the ways to further strengthening the constitutional and legal guarantees of ensuring and protecting human rights. For this purpose appropriate amendments to the Constitution are proposed, as well as a mechanism of supranational guarantees of human rights protections in unrecognized states is investigated .

The proposals and conclusions contained in the present work are focused on the recognition of human rights as the supreme value and directly applicable law, based on the rule of law as the most important feature of the legal state; the establishment and development of the institution of individual constitutional complaints as the most important mechanism for protecting the rights of citizens, as one of the organizational and legal guarantees; the definition of the main development trends of the judicial constitutional control, etc..

The author proposes:

- To revise the legislation regulating constitutional jurisdiction and the formation of the body of constitutional justice out of the system of courts of general jurisdiction;

- To improve the legislation regulating the issues related to the implementation of the NKR Supreme Court decisions, concerning the constitutionality of the provisions of the law;

- To improve the structure of the NKR Constitution making it more specific for the purpose of strengthening the guaranteed protection of human rights within the implementation of constitutional reforms;

- The unrecognized status of the NKR by the international community does not remove the responsibility from the authorities (does not exempt the authorities from the liability) to follow international duties in connection with which it is necessary to initiate the process of ratification of international conventions and improve the national legislation, etc..

Inaccessibility of international bodies for human rights protection for citizens of unrecognized countries a direct danger for regional safety and is a violation of human rights.

International recognition of NKR, safety and security of its citizens' rights depend on our political will to meet the constitutional requirements strictly and consecutively.

The mechanisms of human rights protection cannot be borrowed; they must be consciously demanded by the society. Fulfilling an important military and political role in the region, NKR must strive for self-affirmation as a state showing respect for human rights.

The system of the NKR constitutional justice should pass a long way of development.



